վաններուն ջրերուն տեղն՝ ամէնն այլ գինի է լցեր. թէ հաւուզներն, և թէ զաղրլներն, և թէ այն մեծ հաւուզն՝ որ 17 կեմի[1] կայ վերան, դայն այլ լցեր է գինով. և թանալէն արեր է բովանդակ երկրին. ամենեքեան եկած են՝ մեծ և փոքր՝ արք և կանայք՝ ծերք և տղայք, 7 օր կերած և խմած են լիով՝ երկրին ամենեցուն պատիւ է արեր. այնչափ խմած են, դեռ շատ գինին 'ի տեղն է մնացեր. տեսէք որչափ հիանալի և զարմանալի բան է։

Կրկին փետրվարի երեքում օրն ժա ժամուն Թագաւորի եղբայրն և իւր կինն տարան զիս 'ի սարայն իւրեանց, կամեցան զիմ պատկերիս կերպն քաշելոյ. նա ևս զիւր սէրայներն, և զիւր խաղինայքն, և զամենայն շինուածքն և այլ ինչ որ կայր՝ ցոյց ետուր մեզ. որ ես էի, և իմ թերճիման հալապցի Յովսէփն։ Յորժամ զարձաք յետս, և սկսաք խոնարհիլ Թագաւորի եղբօրն և կնկան, հարց իմ թերճիմանին՝ թէ Հաւանեցա՞ւ զմեր որպէսութիւնն. մեք պատասխանեցաք՝ թէ Աստուած զքո եղբօր Թագաւորութիւնն և զքո բարձրութիւնն հաստատուն պահեսցէ ասա և 'ի հանդերձելումն։

Եւ թէ մի ըստ միոջէ գրենք՝ քան զչափն աւելի ձանձրութիւն էր լսողացն և ընթերցողացն։ Եւ առաւել մեր տեսած բանն՝ միայն թէ աչօք, թէ չէ լեղուօք պատմել չիպար. աչօք չտեսնողն՝ չի հաւատար։

Ֆրանսայու երկիրն 19 արհեպիսկոպոս կայ. 600 քորեպիսկոպոս կայ. 50000 աւագերեց կայ. թող դայլ քահանայքն՝ որ տասնանգամ 100000 քահանայք կան սէֆտէրով։ Դարձեալ չորս հազար քաղաք կայ մեծ և փոքր, ամէնը գեղեցիկ շինուածօք և պարսպօք, շէն և պայծառ։ Դարձեալ Ֆռանսըլին երկրի լայնքն 230 աղաճ է։ Դարձեալ 3000 կաթողիկէով եկեղեցի կայ, որ հանապազ պատարագ կու մատուցվի և մկրտութիւն կու լինի։

Այս մէկ Թագաւորի երկիրն է. եօթն Թագաւորաց՝[2] մինն այս է. քան զՍպանիօրն և քան զՆեմցէն փոքր այս է. ապա ուժով է և մալով. և կովարար զինուոր բազում և շատ ունի. զորս պարապար չկայ եօթն Թագաւորաց մէջն. զորոյ զԹագաւորութիւնն Տէր Աստուած հաստատուն և անշարժ պահեսցէ մինչև 'ի կատարած աշխարհի, ամէն։

«В лето армянского летосчисления 1132 [1683 по Р. Х.], во 2-ой день февраля месяца, я маhдеси Шаhмурад, уроженец Бахеша, отправился в королевскую резиденцию, город Версаль. Видел (там)

[1] В скобках курсивом: *նաւակ, մակոյկ.*

[2] В скобках курсивом: *եոտի քոալ.*

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան